



9 5 2 0 0 2 0

ՀԱՅ—ԲՈԹԱՆԵՐ

(Ազգագրական ուսումնասիրութիւն).

ՆԵՐՍՃՈՒԹԻՒՆ

Ազգերի կեանքի պատմութեան մէջ օրինակը չէ տեսնուած մի այնպիսի ժողովրդեան, որ դարերից ի վեր, անընդհատ, առանց մի րոպէ դադար առնելու, սկսած աշխարհի մի ծայրից դէպի միւսը՝ խումբ առ խումբ մատնուած լինի թափառականութեան. որ աշխարհն ամբողջ իր հողը, իր հայրենիքը համարի և որ գլխաւորն է, միշտ մնայ ինքնուրոյն, առանց կատարելապէս ենթարկուելու միջավայրի դօրեղ, կլանող ազդեցութեան:

Եւ սակայն կայ մի այդպէս ժողովուրդ, որ դարերից ի վեր ոտքի տակ է տալիս Ասիան, Եւրոպան, Ամերիկան և մինչև իսկ Աւստրալիան. աշխարհի ամենահեռաւոր անվիւնում կարելի է հանդիպել նրանց խմբերին, որոնք չեն ենթարկուում ո՛չ մի պայմանի, որոնք գիմանում են ցրտի, տաքի և ամէն կլիմայի, ամէն հանգամանք կարծես ենթարկուում է նրանց:

Ահա տեսնում էք ճանապարհի վրայ, փոշու մէջ, իրենց էջերի վրայ նստոտած կամ ոտքով, կիսամերկ, բոկոտն, ունեցած չուկնեցածը կամ շալակած, կամ սալիքի վրայ բարձած, մանր ու մեծ մանուկներ, կանայք, անցնում են սառուցների միջով, միջօրէականի այրող կլիմայի տակ և ուր որ յօգնեցին—նստում են, իսկոյն առ ձեռն վրան կազմում,

ապրում որքան կամենան, ապա, մի ժամուայ ընթացքում ժողովում և անհետանում են երկրից:

Այդ տարօրինակ ժողովրդին բոլորը ճանաչում են. նրան ծանօթ է աֆրիկացին, որպէս և եւրոպացին ու աւստրալիացին:

Ամէն տեղ նրանք զանազան անուններ են կրում: Անգլիայում՝ *ժիպսի*, Թիւրքիայում՝ *չինգնէտ*, ըոշա, մադագործ, Հայաստանում՝ *զնչու*, Ռուսիայում՝ *ցիզան*, Պարսկաստանում՝ *մըթըրըք*, կարալի, Բոհեմիայում՝ ստացել են տեղական անունը՝ *ըոհեմացիք*:

Դրանք լոշաններն են, մի ենթադրական ծագում ունեցող ժողովուրդ. միջահասակ, խանձուած սև խռիւ մազերով, ձուաձև գէմք, կանոնաւոր և յաճախ շատ վալիւււջ հասակ և հնգկական տիւ ունեցող—մի խառնուրդ նըբութեան և կոստութեան, վայրկնութեան և գեղեցիկութեան:

Բնական է, որ այդպիսի մի տարօրինակ ժողովուրդ դարձնէր իր վրայ ուսումնասիրողների հետաքրքրութիւնը: Գիտնականներ, ճանապարհորդներ, ազգագրագէտներ և լեզուաբաններ գարերից ի վեր ուսումնասիրեցին, քննեցին. մի ամբողջ գրականութիւն կայ նրանց մասին, սակայն գեռ *զնչուն* մնում է կիսովին առեղծուածական մի ժողովուրդ և խուսափում է լիովին ուսումնասիրութեան տակ ընկնելուց:

Ամենից առաջ պատմագէտներն ու լեզուաբաններն եղան, որ հետախուզեցին նրանց: Հին հեղինակների խորին լուսութիւնը նրանց մասին և կամ թեթև, խորհրդաւոր տկնարկութիւնները, այլ և *զնչունների մէջ եղած գաղտնի գիտութիւնները*՝ մի շատ տարօրինակ գաղափար փոխանցեցին յետագայ սերունդին. ամէն տեղ գրեթէ համարում են նրանց եթէ ոչ ամբողջ՝ գոնէ կէս կախարդներ, գուշակողներ և ինչ ենթադրութիւններ ասես, որ երևան չեկան նրանց ծագման մասին: Պրիգորի պատմագէտն օրինակ (1841 թ.) համարում է նրանց առասպելական Ատլանդիկ ցամաքի ժողովրդեան մնացորդ, իսկ Բատալիարը ճգնում է ապացուցանել, որ գնչուները բրոնզեայ նախապատմական շրջանում

ապրում էին հարաւային Եւրոպայում, Փոքր Ասիայում և հիւսիսային Աֆրիկայում:

Այս ենթադրութիւնները ունին իրենց հետևողները, սակայն ո՛չ մի ճշտութիւն չեն ապացուցանում: Աւելի շատ հաւատ է ընծայւում այն ենթադրութեան, որ գնչուների ծագումը համարում է պատմական ժամանակներում: Հերոզոտը և Սալարոնը լիշեւով աիգիւնների մասին, նրանց հայրենիքը համարում են Կովկասը և Փոքր Ասիան. գոնէ այնպէս է ենթադրւում նրանց ասածներէց: Բիւզանդական VII և XII դարերի վկայագիրները լիշատակում են նրանց մասին, անուանելով *ցիզաններ* և վերջապէս, լեզուաբանական հետազոտութիւնները գալիս են գրեթէ հաստատապէս մի ենթադրութիւն անելու, որ բոլորից աւելի հաւանական է թւում:

Լեզուաբանները սկսեցին ուսումնասիրել գնչուների լեզուն, որ բոլորովին տարբեր է և բնորոշ, ու գտան, որ նախառնուրդ է հնդկական եօթ լեզուների, որոնք են—*Տիւնդի*, *մարրաթ*, *բէնջարի*, *սինդի*, *գիւգերթ*, *բէնգալի* և *օրիջա*: Բայց առանձնապէս գնչուների լեզուն դրանցից ո՛չ մէկին նման չէ. մանաւանդ այժմ, որ ենթարկուած լինելով զանազան, իրենց բնակուած և կամ աւելի երկար ժամանակ անցկացրած երկրի լեզուներին, կորցրել են քերականութիւնը, շատ բառեր, եղածներն էլ կամ աղաւտղել են և կամ նոր բաղադրութիւնների ենթարկել:

Միկլոշիչ նշանաւոր լեզուաբանը գտնում է, որ գնչուների լեզուն շատ մօտ է Սինդ երկրի նոր-արիական լեզուին: Այդ երկիրը գտնուում է Բիւուջիստանի սահմանի մօտ, հընդկական Բոմբէի րաջայութեան մէջ:

Լեզուաբանական այդ ենթադրութիւնները այն եզրակացութեան տարաւ, որ գնչուների հայրենիքը եղել է Հընդկաստանը և նրա ծագումն է հնդկական Սինդ երկրի ջատ ցեղից: Այս թէորիան ընդունելութիւն գտաւ մեծ յաջողութեամբ և լետագայ ուսումնասիրութիւնները ամրապնդեցին նրան աւելի ևս:

Գտնուելով ուրեմն գնչուների հայրենիքը, այնուհետև դիւրին եղաւ զանեւ նրանց գաղթականութեան ճանապարհը, որով նրանք ցրուեցին ամէն կողմ:

Գնչուները թողել են իրենց հայրենիքը—Հնդկաստանը ենթագրութեամբ՝ 1000 թուին. բայց այս թիւը ճիշտ չէ կարող լինել, եթէ ընդունենք, որ Հերոզոտի սիգիւնները և Հոմերի սինգիւնները՝ այժմեան ցիգանների նախնիքներն են. այն ժամանակ նրանց Հնդկաստանից դուրս գալը գրեթէ գնում է պատմութեան առաջին շրջաններում:

Սակայն Եւրոպա և Ասիա մտնելու ժամանակը համարուում է ոչ ուշ՝ քան 1000 թուականը: Ցիգանների այդ գաղթականութիւնը եղել է երկու մեծ ճիւղերով: Առաջինը ծով-եզերքով՝ դէպի ցամաք: Իջնելով Ինդու գետի հոսանքն ի վար, այդ առաջին ճիւղը Բիւուշիստանի և Պարսից ծոցի ափերով անցել է մինչև Արաբիա և Կարմիր ծովը, այնտեղից հասել Սիրիա և ցրուել Կրետէի, Կիպրոսի և Արշիպելագոսի կղզիների վրայ: Իրանից մի մասը բաժանուելով գնացել է աւելի արևմուտք և մտել Սգիպտոս և նոյն իսկ Ալժիրիա, իսկ միւս մասը տարածուել Փոքր-Ասիոյ մէջ:

Գաղթականութեան երկրորդ ճիւղը Հնդկաստանի վերին կողմերից մտել է Պարսկաստան, Միջագետք և Փոքր Ասիա—Սև ու Կասպից ծովի եզերքներում, ուր և հանդիպել է միւս ճիւղին: Այս հանդիպումով է բացատրուում Բալկանեան թերակղզու և Փոքր-Ասիայի մէջ գտնուող ցիգանական աւելի շատ ազգաբնակութիւնը, այլ և Թիւրքիայի մէջ գտնուող երկու տեսակ գնչուների գոյութիւնը, որոնք թէ լեզուով և թէ սովորութիւններով բաւական զանազանուում են միմեանցից: Նրանց ներկայացուցիչներն են, որոնցից մէկին այժմ Թիւրքիայում կոչում են չինզնէ, իսկ միւսին՝ հայ-քոշա:

Այժմ ես այստեղ հարկ եմ համարում ամփոփ կերպով առաջ բերել այն բոլոր ուսումնասիրութիւնների արդիւնքը, որ կատարուած են եւրոպական գիտնականների, պատմա-

բանների կամ ազգագրագետների ձեռքով—աւելի շատ ի հարկէ եւրոպական գնչուների մասին և շատ քիչ՝ ասիականների:

Ենթադրուում է, որ գնչուները Եւրոպա են սկսել մշտնել 1417 թուից սկսած, Սև ծովի ափերից անցնելով Մոլդավիա և Վալախիա՝ զանազան 70—200 անձերից բաղկացած խմբերով: Ամեն մի խումբ (լայ) ունէր իր գլխաւորը (պօլզար), իր դատաւորները (ահիլ), իր իշխանները (ջամադար), որոնք Եւրոպա անցնելուց յետոյ կոչոււմ էին հերցոգ, իշխան, թագաւոր, կոմս, ասպետ՝ եւրոպական պատմաբանների կողմից:

1417 թուին էր, որ Դանուբի եզերքներում յայտնուեց գնչուների առաջին մեծ խումբը, առաջնորդութեամբ «թագաւոր» Սինդելի, «հերցոգ» Միխայլի, Անգրաշի և Փանուէլի, այլ և «կոմս» Իօնի և «ասպետ» Պետրոնի: Սրանք քայլում էին խմբի առջևից ձիերով, իսկ ամբողջ բոկոտն, անգլխարկ, ցնցոտիների մէջ և միւսնոյն ժամանակ ոսկեայ գօտիներով ու զարդերով՝ հետևում էին նրանց: Կանայք մէջքերի վրայ էին կապել մանուկներին, տղամարդիկ զէնքեր էին կրում, իսկ կահ կարասիքը բեռնել էին ձիերի վրայ: Խումբը ունէր նաև իր պահապան շները:

Եկուոր տարօրինակ խմբի մի մասը տեղաւորուեց Դանուբի եզերքների վրայ, իսկ միւս մասը շարունակեց իր ճանապարհը երկու ճիւղով: Առաջին ճիւղը թագաւոր Սինդելի առաջնորդութեամբ շարունակուեց դէպի արևմուտք, իսկ երկրորդը հերցոգ Փանուէլի միջոցով՝ անցաւ հիւսիս, մտաւ Բոհեմիա, Սաքսոնիա և կանգ առաւ Դանիայում և Բալթիկ ծովի ափերի վրայ:

Քսան տարի թափաւելուց յետոյ, այդ խմբերը մաս-մաս եղան և հաստատուեցին միջին Եւրոպայի զանազան երկրներում — Հունգարիա, Բոհեմիա, Սաքսոնիա, Շվեյցարիա, Ալզաս, 1422-ին՝ Իտալիա, 1424-ին՝ Բաւարիա և 1427-ին՝ Փրանսիա, որտեղից նրանք անցան 1430 թուին՝ Անգլիա:

1500 թուին հետզհետէ Եւրոպա լցուող գնչուներից

մտան Լեհաստան և Ռուսաստան և ապա 10—20 տարուալ ընթացքում եւրոպական ամէն երկրներում երևացին նրանք: Այսպէս 100 տարուց յետոյ, գնչուներն արդէն հասել էին մինչև Ամերիկա և Աւստրալիա:

Ակզրում Հնդկաստանից եկած այդ հիւրերը շատ լաւ ընդունելութիւն գտան ազգաբնակութիւնների մէջ: Եւրոպայի այդ ժամանակուայ ողորմելի նախապաշարումներով, սնտոհապաշտութեան մէջ ընկղմած և տգէտ ժողովուրդը ահագին քանակութեամբ խուճում էր գնչուների վրանների շուրջը, օգտուելու համար նրանց բժշկական միջոցներով և գուշակութիւններով Գնչուները գիտէին շատ բուժիչ խոտեր, գիտէին մետաղների հալելու և բաղադրութեան արհեստը և այգպիսով, սկսած աղքատ դասակարգից մինչև ազնուականներն ու կրօնաւորները, հարստացնում էին նրանց ու սլաշապանութիւն ցոյց տալիս: Գնչուները հարստացան, կշտացան, յարգ վայելեցին և շրացած յաջողութիւններով, շուտով սկսեցին գողութիւն և խաբեբայութիւն: Նրանց վրանները ալպաստան եղան լանցաւորների, աւազակների, հրձիգների: Այնուհետև գնչուները սկսեցին ատելի գառնալ կառավարութեան, որին նրանք հոգս էին պատճառում, հոգևորականութեանը, որ սկսեց նրանց վրայ նախել որպէս դժոխքի ոգիների հետ կապ ունեցող մի ժողովրդի վրայ: սկսեցին հալածանք: Փոքր առ փոքր այնքան մեծացաւ անկարգութիւնը մի կողմից և հալածանքը միւս, որ գնչուները գրուեցին օրէնքից դուրս և վճռուեց կոտորել ըսլորին.... Եւ ահա վառուեցին խարոյկներ, կառուցին կախաղաններ, տանջարաններ:

Առաջին քալը արաւ Սպանիան. նրան հետևեցին շուտով Իտալիան, Ֆրանսիան, Գերմանիան և միւս եւրոպական պետութիւնները: Մի քանի երկրներում էլ այնպիսի խիստ օրէնքներ սահմանուեցին գնչուների համար, որ նրանք պարտաւորուեցին փախչել: Միայն Հունգարիան էր, որ մարդասէր գտնուեց համեմատաբար: Այստեղ գնչուները վայելում էին հաւասար իրաւունքներ և երբեմն միայն, երբ

շատ էին գրգռում ժողովրդի ասելու թիւնը, թափուում էր արիւն: Նոյն տեսակ մարդասիրական վարմունք գտան գրն-
չունները Ռուսաստանում, ուր նրանք վախ չունէին հայա-
ծանքից, ապրում էին հանգիստ և ազատ. մինչև իսկ օրէնք-
ներ գրուեցին թեթևացնելու համար նրանց կեանքը:

Երեք հարիւր տարի շարունակ ամբողջ Եւրոպայում
նրանց հալածեցին, կոտորեցին, կախեցին ու այրեցին ամէն-
քը այնպէս անգթութեամբ, որ յաճախ կարծուում էր թէ
այլ ևս գնչու չէր մնացել: Սակայն հազիւ թէ դադարում
էր այդ բարբարոսական օրսը, որ գնչուները նորից երևան
էին գալիս և ահա նորից սկսում էր կոտորած, խարոյկ, կա-
խաղան... Վերջապէս պետութիւնները հասկացան, որ այդ
ճանապարհով անհնար էր վերջ դնել չարիքներին, ուստի
սկսեցին մեղմացնել հալածանքը և 1773 թուին, Աւստրո-
Հունգարիայի թագուհի Մարիա-Թերեզան հրատարակեց գրն-
չուների վերաբերեալ նոր, մարդասիրական օրէնքներ: Գրն-
չուների, թշուառ հալածականների կեանքը սկսեց բարւո-
քուել. նրանց ապրելու իրաւունք տրուեցաւ, չնայելով որ
ստրուկ ապրելու Մարիա-Թերեզայի յաջորդ Յովսէփ II-ը
աւելի թեթևացրեց գնչուների ստրկութիւնը և սրանք այ-
ժմ կարող եղան բնակուիլ քաղաքներում, գիւղերում և
մինչև իսկ հողագործութեամբ զբաղուել:

Փոքր ևս և Աւստրիան կատարելապէս հանգարտուեց,
այդ յաջող փորձը օրինակ եղաւ եւրոպական միւս պետու-
թիւնների համար և հետզհետէ դադարեց բոլորովին՝ գրն-
չուների ճնշումը, ու վերջապէս 1856 թուին միայն եւրո-
պական բոլոր գնչուները ազատագրուեցին ստրկութիւնից և
հալածանքից և իրաւունք ստացան ապրել բոլոր միւս ազ-
գերի պէս:

Հալածանքը դադարելուց յետոյ, գնչուները սկսեցին մի
նոր շարժում և հետզհետէ տեղաւորուեցին եւրոպական եր-
կիրներում, աւելի շատ՝ Բալկանեան թերակղզու վրայ և
Ռուսաստան: Հետևեալ ստատիստիկական մօտաւորագոյն
թուերը ցոյց են տալիս, թէ որտեղ որքան գնչուներ կան:

Թիւրքիայում, անորոշ ստատիստիկական տեղեկութիւններէ հիման վրայ, ճշտապէս հաշուել անհնար է եղել:

Հունգարիա	150,000
Թիւրքիա	67,000
Ռումինիա	250,000
Ռուսաստան	63,000
Րուլզարիա և Սրեկէ. Բումիլիա	50 000
Սերբիա	84,000
Սլոանիա	40,000
Իտալիա	32,000
Բուսնիա և Հերցեգովինիա	18,000
Յունաստան	10,000
Աւստրիա	16,000
Շուէդի և Նորվեգիա	1,500
Դանիա և Նիդերլանդիա	6,000
Դերմանիա	2,000
Ֆրանսիա	2,000
Անգլիա	12,000
Չեքոսլովակիա	500
Արտապի միւս երկիրներ	15,000

Ընդհ. գում. 779,000

Պասսպատիի ասելով Թիւրքիայում հաշուում են ոչ թէ 67,000, այլ 107,000 անձ, Բումինայում—300,000. Իսկ Միկլոշիչի ասելով Ռուսաստանում ապրում են 1,500,000 չափ գնչուներ, որ անհաւանական է:

Գնչուները, որոնք ապրում են աշխարհի միւս մասերում, չեն որոշուում քանակութեամբ, որովհետև միշտ երկրուն են: Մօտաւորապէս կարելի է այսպիսի թուեր տալ. Կովկասում՝ 3,000, Փոքր-Ասիայում՝ 67,000 (50,000 հայ բողոքականներ), Պարսկաստան մինչև 1856 թիւը հաշուում էր՝ 13,000, իսկ Անգր. Կոլոկչին ասում է, որ Սիբիրում և Արևմտ. Հնդկաստանում կան 20,000 գնչուներ, իսկ Աֆրիկայում, Ամերիկայում և Աւստրալիայում՝ 166,000:

Ըստ զանազան հեղինակների, գնչուների ընդհանուր թիւը տարուբերում է 1—5 միլիոնի. բայց միջին թիւը

վերցնելով՝ կարելի է գնչուների թիւը համարել ոչ աւելի քան 3 միլիոնի:

Այսպէս ուրեմն, գնչուները ոչ միայն ցրուած են ամբողջ երկրագնդի վրայ, այլ միշտ շարժուում են այս երկրից այն երկիր և ամէն տեղ չեն կորցնում իրենց բնորոշութիւնը, որքան էլ որ ենթարկուին միջավայրի ազդեցութեանը: Գորցնում են նրանք միմիայն հաւատքը — եթէ երբ և իցէ ունեցել են — լեզուն աղաւաղում են, աղքատացնում նորամուտ քերականական սճերով և բառերով, իսկ տիպը, բնաւորութիւնը, կեանքի ձևը միշտ նոյնն է մնում թէ ցուրտ և թէ տաք կլիմայի տակ: Քչերն են միայն որ վարժուում են հաստատարնակութեան. մեծ մասը թափառական, ամբողջ աշխարհը, ամէն երկիր իրենց հայրենիքն են համարում, իրենց սեփականութիւնը և չեն ենթարկւում ոչ մի օրէնսդրութեան, ոչ մի իշխանութեան:

Գնչուն միջհասակ է, երբեմն կարճ, սև խանձոտ մազերով, ձուռաձև դէմք, կանոնաւոր հասակ և յաճախ վախելուչ. ճակատը ետ փախած, յառաչնածնօտ (պրօզնատ), աչքերը կապտագորշ կամ սև: Գուպերնիցիին, որ Բուխարէստի հիւանդանոցում քննել է 20-ի չափ գնչուական գանգեր՝ գտնում է, որ նրանք նման են հնդկական ցած ցեղերի գանգերին: Մի քանի ուրիշ հեղինակներ ասում են, որ գնչուների մէջ երկու տեսակ ցեղեր կան — կուպիտ և նուրբ, բայց դրանք միմեանց խառնուելով, կազմել են մի նոր տեսակ բաղադրուած տիպ՝ խառնուրդ նրբութեան և կուպուութեան:

Ո՛չ մի ցեղ այնքան դիմացկուն, չարքաշ չէ, որքան գնչուն. նա հեշտութեամբ տանում է ցուրտը, որպէս և տաքը. ոչ մի կլիմա չէ ընկճում նրան. բոկոտն, ցնցոտիներով, գլխաբաց նա թափառում է ամէն եղանակի մէջ իրեն միայն յայտնի ճանապարհներով մի երկրից միւսը, չք վախենալով ոչնչից: Ամենափոքր հասակից նա վարժուում է թափառականութեան, կպած իր մօր մէջքին կամ քաշ գալով նրա կողքից, ցրտի դէմ պաշտպանուելով միայն շնորհիւ

այն ճարպի, որով օծում է նրան իր մայրը ոտից մինչև գլուխ: Ամէն բանի դիմանում է, ամէնին վարժում է, միայն թէ ազատ լինի և անկաշկանդ — ահա զնչուի ամենացանկալի բանը աշխարհիս երեսին: Նա առանց ազատութեան մի օր չէ կարող ապրել և ո՛չ մի հարստութիւն կամ փառք չի փոխիլ նրա հետ:

Գնչուն կրօն չունի, այս հաստատում են բոլոր հեղինակները և եթէ նա Թիւրքիայում թիւրք է կամ հայերի մէջ քրիստոնեայ — դա միայն անում է կամ ստիպուած, կամ իր շահու համար: Իտալացի յայտնի ցիգանագէտ Գուիգօ Կոստա պատմում է, որ ինքը ճանաչել է մի ցիգանի, որ 7 անգամ փոխել է իր կրօնը, նայելով թէ որ երկրումն է և ու՛րք որ կրօնի կողմն է: Գնչուն ո՛չ մի գաղափար չունի Աստծոյ, միև աշխարհի, հօգու անմահութեան և այլն վրայ: Նրա ամբողջ կեանքում ոչինչ չէ կարելի գտնել, որ մասնի ու է կրօնի նշան. նրա երգերի մէջ իսկ չկայ հաւատարիքի մասին ու է տկնարկութիւն և ինչպէս երևում է, նրա նախնիքներն էլ եղել են անկրօն և անհաւատ: Իսկ նրանց բոլոր կախարդական և այլ նախապաշարումները ենթադրել են տալիս, որ նրանք ճարպիկութեամբ օգտուել գիտեն սնտիպո՛շտ ժողովուրդների կամ ազգերի թուլութիւններից՝ շահուելու համար:

Կրօնի բացակայութեան հետ, չկան նաև իրենց մէջ մի որևէ հասկացողութիւն մի հայրենիքի կամ անցեալ պատմութեան վերաբերութեամբ: Նա իր աստուածն է համարում այն ամէն ազգի աստուածը, որոնցից աւելի շահ և բարեկամութիւն է ստանում, իսկ իր հայրենիքը՝ այն հողը, որի վրայ նա առժամանակեայ հաստատուում է և կամ ուր գիւրութիւն ունի ապրելու: Չնայելով դրան, զնչուն հեշտութեամբ կամ բոլորովին չէ ձուլվում մի որևէ ազգի հետ. ազգիկ չէ տալիս, չէ առնում, յարաբերութիւնների մէջ խիստ զգոյշ է և զնչու չեղողին անուանում է «գահնօս կամ քուսնօս», թիւրքերին՝ «պսու» (անօրէն), հայերին՝ «կլարաւ» (երկրագործ):


Չնուրուեցու, միջազարի ազգեցութիւնից չայլասերուելու պատճառը գլխաւորապէս ներկայանում է նրա թափառականութեան ոգին: Իե՞ս ևս Եւրոպայի արևմտեան մասերում—Սպանիայում, Իտալիայում և Անգլիայում, նրանք փոքր ի շատէ ենթարկուել են պայմաններին և կիսովին կորցրել ազգային բնորոշութիւնը, լեզուն, բարքերը: Նոյնը պատահել է նրանց հետ նաև Հայաստանում, ինչպէս ես մտազիր եմ ցոյց տալ աշխատութեանս ընթացքի մէջ: Իսկ արևելեան Եւրոպայում և Հայաստանի ու Բալկանեան թերակղզու զանազան մասերում նրանք ո՛չ միայն չեն սիրում հաստատարձակ դառնալ և կորցնել իրենց ինքնատիպութիւնը, այլ մինչև իսկ արհամարհաբար, թշնամաբար են վերաբերվում իրենց այն ցեղակիցներին, որոնք մի որևէ տեղ երկար մնում են և ինքնատիպութիւնը սկսում են կորցնել: Գնչուն — ասում են նրանք պիտի միշտ թափառի, վրանների տակ ապրի, պատրաստ լինի իսկոյն չուելու: Եւ իսկական գնչուական լեզուն ու բարքերը կարելի է ուսումնասիրել միմիայն այդ թափառականների մօտ:

Մարգու գործանքն է շարժում գնչուների տուպգրաֆիական ընդունակութիւնները: Զգիտե՛նալով տեղական լեզուն, երկրի ճանապարհները, աշխարհագրութիւնը, նրանք ամենայն դիւրութեամբ, առանց սխալուելու կտրում են երկիրը ամէն ուղղութեամբ, երբէք չեն մոլորում, ուղիղ դէպի նպատակակէտն են գնում և գիտեն թէ որտեղից անցնել կարելի է, որտեղից՝ ոչ. գիտեն թէ ուր յարմար է վրան կանգնել հանգչելու, որ գիւղում կամ պանդոկում ընդունելութիւն կը գտնեն և կամ կը վաճառեն: Անդրէաս Կոլոկչի, իտալացի յայտնի ցիգանագէտը, Ապիրինեան լեռներում հանդիպում է մի օր գնչուների մի խմբի, որ այնքան լաւ գիտէին երկիրը և նրա ճանապարհները, որ կարծես ընկիներ լինէին: Մի ուրիշ անգամ էլ նա Կ. Պոլսի Կադըքէօյում տեսնում է իտալական գնչուների, որոնք Իզմիտի (Սիկոմիդիա) վրայով Զմիւռնիա էին անցնում այնպիսի դիւրութեամբ, որ կարծես քսան անգամ գնացած եկած լի-

նէին այդ ճանապարհով, չնայելով, որ նրանք առաջին անգամն էին անցնում այդ երկիրը:

Ինչո՞ւմն է ուրեմն գաղտնիքը. ինչից է, որ գնչուները առաջին անգամից իսկ, առանց հարցնելու և առանց մոլորուելու՝ գիտեն իրենց ճանապարհը, գնալիք տեղի ուղղութիւնը, հանգչելու տեղերը, բարեկամ կամ թշնամի գիւղերն ու հանգրուանները:

Երկար քննելուց լետոյ յայտնուեց, որ գնչուները ունին իրենց մէջ այնպիսի նշաններ, որոնցով հասկացնում են միմեանց՝ անցնելիք ճանապարհը և այլն: Գնչուների իւրաքանչիւր խումբ, անցնելով ու է տեղով, զանազան—միայն գնչուներին հասկանալի նշաններ են գծում պատերի, ծառերի բունների վրայ և յետագայ խումբը տեսնելով այդ նշանները, հասկանում են նրանց: Ամենասովորական նշանները, սրանք հնուց ի վեր գործածական են նրանց մէջ, սրանք են.



Սրանցից առաջինը, եռաժանին, ինչպէս երևում է, ամենագործածականն է և կոթը ցոյց է տալիս գնալիք ճանապարհի ուղղութիւնը: Երկրորդը, որ բուդիստական մի հին նշան է և գնչուները կոչում են *սվաստիկա*, գործածվում է ճանապարհի փակուած լինելը ցոյց տալու համար և կամ վտանգաւոր: Երրորդ խաչաձև գծի երկար կոթը նոյնպէս ցոյց է տալիս ճանապարհի ուղղութիւնը, իսկ չորրորդը, որ աւելի կարելի է տեսնել Թիւրքիայում, — և դա՛ շատ հասկանալի պատճառներով—նշանակում է, որ այդ ճանապարհով գնալը խիստ վտանգաւոր է և մահաբեր գընչուների համար:

Միայն սրանք չեն նշաններ, այլ շատ շատերը կան, որոնց նշանակութիւնը գեռ ևս միայն գնչուները գիտեն և որոնց շնորհիւ նրանք այնպէս են ոտնատակ տալիս անձանօթ երկիրներ ու ճանապարհներ, որ կարծես ամէն տեղ իրենց մատների պէս ճանաչում են:

Իտալացի մի ուրիշ ցիգանագէտ Գուլիգօ Կոստա պատմում էր *), որ անդադար, գրեթէ ամէն օր նորանոր նշաններ գծուած էր տեսնում իր տան մօտի ծառերի վրայ և ամէն անցնող ցիգան մտնում էր իր մօտ, որովհետև նա նրանց լաւ ընդունելութիւնն էր ցօյց տալիս, ուսումնասիրելու նպատակով: Աւելի շատ նա տեսնում էր եռաժանիւն—բարեկամա. կան ընդունելութեան նշանը:

Բացի դրանցից, գնչուները մեծ ընդունակութիւն են ցօյց տալիս լեզուներ շուտով սովորելու մէջ և դա էլ շատ է օգնում նրանց թափառականութեան և ճանապարհները գիւրութեամբ գտնելու:

Եւ այդպէս, աշխարհիս մի ծայրից միւս ծայրը կրում անցնում են նրանք միշտ թափառելով, միշտ սակաւապետ իրենց թէ ուտելիքի և թէ հագնելիքի մէջ. միշտ դիմացիուն ցրտի, տաքի, յոգնութեան, ամէն տեսակ հանգամանքների և երբէք գրեթէ չձուլուելով, չկորցնելով իրենց ինքնատիպութիւնը (originalité):

Գնչուին շատ հազուագիւտ չէ ցամաք հացով կերակրուել ամիսների ընթացքում, մինչև որ յաջողուի մի գիւղից մի հաւ գողանալ: Եստ սիրում են ուտել ընդեղէն. որպէս տօք կլիմայի զաւակներ, գերադասում են միշտ կծու բաներ—պղպեղ, սխտոր. ծխում են և լաւ էլ օղի խմում և այդ անում են ո՛չ միայն տղամարդիկ, այլ և կանայք ու մանուկներ:

*) Այդ ցիգանագէտը գնչուների մասին 1892 թուին ժընէվի աշխարհագրական ընկերութեան մէջ մի դասախօսութիւն արեց և մեր, ներկայ եղողներին առջև դժեց վերոյիշեալ նշաններից մի քանիսը և հաստատեց նրանց: Դասախօսութեան ներկայ էինք նաև ես և պ. Ե. Լալայեանը:

Հագուստի կողմից նոյն յատկանիշն ունին. սիրում են փալլուն բաներ, վառ, կենդանի գոյներ. ամենից աւելի կարմիր և կանաչ կտորներ: Գրեթէ քաղաքով և գլխաբաց են ման գալիս, մանուկները եթէ ոչ բոլորովին, գոնէ կիսովին մերկ, սև, աղտոտ, չնայելով որ Եւրոպայում ստիկանութիւնը խստութեամբ հսկում է որ ոչ մի ցիգան մերկ չման գայ: Հաստատարնակները ապրում են ողորմելի խրճիթների մէջ, աղտոտ, անհոգ: Խրճիթի մէջ ամենամեծ և պատուաւոր տեղը բռնում է «Օջախը» (Սանթօ), որին նրանք պատուում են և որի վրայ զբաղւում են պայտեր շինելով, որովհետև գնչուները սաստիկ ընդունակ են դարբնութեան արհեստին և առհասարակ մետաղագործութեան: Բացի այդ արհեստից, զբաղւում են նրանք անասնաբուժութեամբ և վարպետ են գրա մէջ, Լաւ երաժիշտներ են, լաւ էլ անասուններ կրթող-արջեր, այծեր: Արևելքում նրանք պատմիչներ են, գուշակողներ:

Գնչուների երաժիշտ և լաւ երաժիշտներ լինելը յայտնի է աշխարհին: Նրանցից գուրս են եկել շատ յայտնի արտիստներ, մանաւանդ ջութակահարներ, որպիսիք են Ալէնայի նշանաւոր Պաննը և շոտլանդացիների արքայա Բիլիարի, ներկայ դարի սկզբներում: Գեղարուեստի միւս ճիւղերն էլ պակաս նշանաւոր արտիստներ չեն տուել գնչուներից: Օրինակ, XV դարու սկզբներում հռչակ ունէր նկարիչ Անտօնիօ Սօլարի գնչու, իսկ XVII-երրորդ դարում ժողովրդական հրապարակախօս անգլիացի Ջօն Բէննիէնը (ծն. 1628-ին, մեռ. 1688-ին) գնչու էր: Բայց մուզիկայի մէջ նրանք աւելի արտիստներ են տուել: Ամէն գնչու գրեթէ նուազել գիտէ և գիւղական հարսանիքներում ու հանդէսներում նուագողները գնչուներ են: Նրանց եղանակները ունին իրենց բնորոշութիւնը. մեկամաղձոտ, երբեմն ճչացող և յաճախ ջղեր հալեցնող կրքոտ կտորներ, կայտառ պարերգներ, գողտրիկ միլօգիաներ: Լիստի բապօղիաները, մանաւանդ II բապօղիան, որ կատարելապէս, առանց աղաւաղելու, գնչուական եղանակներ են, բովանդակում են իրենց

մէջ այդ տարօրինակ ցեղի ամբողջ մուգիկան—տխուրն ու կայտառը, մեղամաղձոտն ու զուարթը: Բրամսի (ժօհան) պարերգները գնչուական են. Եսպենն ու Մուբերտն իսկ իրենց շատ կտորները հեղինակելիս՝ ազգուել են գնչուական եղանակներին:

Գնչուական մուգիկայի տիպիքական գաման այսպէս է:
լա, սի-բէմօլ, դօ-բէմօլ, ըէ, մի, ֆա, սօլ-դիէզ, լա,
սի-դիէզ, դօ-դիէզ, ըէ.

Այս եղանակը նման է պարսկական հիջազ կոչուող մեղամաղձոտ և հայկական եկեղեցական երգեցողութեան մէջ յայտնի Գձ. անուանող եղանակի տեսակին, իսկ միւս կողմից մայարօսիական և էքօսիական եղանակներին: Մուգիկայի մէջ $3/4$ ամանակ գրեթէ չկայ կամ շատ հազուադէպ է. իսկ $2/4$ և $4/4$ շատ:

Բայց արդեօք գնչուները դրա հետ միասին ունին պահած բանաստեղծութիւններ, կամ հեղինակում են և կամ ունեցել են—գրեթէ անյայտ է և չէ ուսումնասիրուած:

Սակայն գնչուները յայտնի են պարերի մէջ և դա երեւում է աւելի Թիւրքիայում: Պարերը ինքնատիպութիւն ունին Գնահատուած էին նրանք նոյն իսկ Յրանսիայում XVII դարում. յայտնի են Պարսկաստանում (մթրբընների պարեր), Սպանիայում (copondo պարը) և արեւելքում (բօմայիկ պարը), որոնք շատ են լիշեցնում հնդկական և եգիպտական յայտնի ըայադներների և հաւազի պարերը:

Մեզ մնում է մի քանի խօսք աւելացնել այս ներածութեան վրայ, գնչուների ամուսնութեան, թաղման և այլն մասին, ի հարկէ միշտ աչքի առաջ ունենալով եւրոպական ցիգանները: Աշխատութեանս բուն մասի մէջ, որ մի ընդարձակ ուսումնասիրութիւն կը լինի, հնար եղածին չափ մանրամասնութեամբ պիտի խօսեմ միմիայն հայ բոշաների բարբերի, սովորութիւնների և այլն մասին: Համեմատական նկարագրութիւն ունենալու համար էր, որ ես, քաղելով

եւրոպական ցիգանագէտներին և ազգագրագէտներին գործերին, աշխատութեանս սկզբում տուի այս համառօտ, բայց ամփոփ տեղեկութիւնը եւրոպական ցիգանների մասին:

Ամուսնութիւնը եւրոպական ցիգանների մէջ կատարուում է շատ փոքր հասակից. 14—15 տարեկան տղան ամուսնացնում են 12—13 տար. աղջկայ հետ: Հարսանիքը կատարուում է 3 օր և շատ մեծ խնջուքով: Կինը դառնում է սարուկ իւր ամուսնուն և կուրօրէն հնազանդող, չնայելով որ կնոջ ծնողների իշխանութիւնը չէ ոչնչանում: Յիգանները շատ են ծնում և ծնողները նրանց սիրում են, չնայելով որ նրանց, հէնց մանկութիւնից՝ վարժեցնում են շարքաշ կեանքի:

Թաղումը կատարուում է առանց ունեւ ծէսի և արարողութեան: Յիգանը չէ հաւատում հանդերձեալ կեանքի և մի տեսակ վախ զգալով մեռածից, իսկոյն աշխատում է թաղել գիւակը: Մեռելատէրերը երբէք չեն լաց լինում, այլ լուռ նշաններով միայն լայտնում են իրենց վիշտը:

Լեզուին գալով, եւրոպական ցիգանները ունեցել են մօտ 14 տեսակ բարբառներ, բայց բոլորն էլ մի արմատից բղխած և բաւական ազաւաղուած: Աւելի հետաքրքիր և բնորոշ դրութեան մէջ, քիչ ազաւաղուած, մնացել են արեւելքի գնչուների բարբառները, որոնք մեծ նշաններով լայտնում են որ լեզուն եթէ ոչ բուն սանսկրիտեան, այլ նրա մօտաւոր ճիւղերից մէկն է:

Ահա այդ ժողովրդեան մի ստուար ճիւղն է, որ անցել է Փոքր-Ասիա, ցրուել հայ ազգաբնակչութեան մէջ, կիսովին ենթարկուել միջավայրի ազդեցութեան և կազմել է հայ-բոշազ կոչուող այն տարօրինակ ժողովուրդը, որի մասին միակ հեղինակաւոր եւրոպացի գրողը Պասպատին է, անուանելով նրանց «Թիւրքիայի ցիգաններ»:

Այդ հայ-բոշազները կը լինին իմ ազգագրական ուսումնասիրութեան նիւթը այս աշխատութեան մէջ:

Նիւթերը և ուսումնասիրութիւնը կազմել են եւ ան-
ձամբ մանգալով և ապրելով հալ բոշաների մէջ Թիւրքա-
հալաստան, Կովկասում—Կարս և Ալէքսանդրօպօլ, ուր ա-
հագին քանակութեամբ կէս նստակեաց կեանք են վարում
նրանք:

Իմ ալս ներածութեան համար ես օգտուել եմ մինչև այժմ
լոյս տեսած կարևոր գրքերից և լրագիրների կամ ամսագիրների մէջ
երևացող լոգուածներից, որպիսիք են. Paspati „Etudes sur les
Tchinghianés“. Dixon „La Russie libre“ (Tour du monde հան-
դէս 1872 թ.). F. Liszt „Des bohémiens et de leur musique“.
Паткановъ „Цыганы“. Lespinass „Les bohémiens du pays
Basque“.

Օգտուել եմ ի միջի ալսց, նաև „Journal Asiatique, 1879—
1886“. «Մուրճն ամսագիր 1890 Անդրէաս Կօլօկչիի լոգուածից. „При-
рода и Люди“ Նէմցէվի լոգուածից (1892), Ֆրանսիական Կոր տը-
պագրուող „Grande encyclopedie“ և Լաուուսի հանրագիտական մեծ
բառագրքերից:

Գնչուների երաժշտութեան մասին օգտուել եմ և ուսումնասի-
րել անձամբ լիտտի, Ծուրերտի և Բրամսի երաժշտական կոորնե-
րից, որպէս և անձամբ ժողոված եղանակներից:

Վ. Փափազեան

(Կը շարունակուի).